

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան

«29» հունվարի 2015 թ.

Հայաստանի Հանրապետության զիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա.Օրբելու անվ.ֆիզիոլոգիայի ինստիտուտ ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն Նաիրա Մ.Այվազյանի (այսուհետ՝ Կազմակերպություն)ի (այսուհետ՝

(Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), «Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունների և շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորող մեխանիզմները» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման (Ծրագրի անվանումը)

նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 123724,9 /մեկ հարյուր քսաներեք մլն յոթ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 123724,9 /մեկ հարյուր քսաներեք մլն յոթ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարիությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 113826,9 /մեկ հարյուր տասներեք միլիոն ութ հարյուր քսանվեց հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե

միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

- ա. Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված գիտական ծրագրի հայտը,
- բ. Առաջադրանքը (հավելված 1),
- գ. Օրացուցային պլանը (հավելված 2),
- դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),
- ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա
 ք. Երևան, Մարշալ Բաղդասյան 24
 Հ/հ 1510005175820100
 ՀՎՀՀ 00005673
 Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ. Տ.



ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ս.Օրբելու անվ.
 Ֆիզիոլոգիայի ինստիտուտ
 Երևան, 0028, Օրբելի եղբ. փող.22
 ՀՎՀՀ 00008543
 Հ/Հ 163038100521 Սյանիկյան
 «Հայեկոմբանկ»
 Տնօրեն՝ Ն.Մ.Այվազյան

(ստորագրություն)

Կ. Տ.



(ստորագրություն)

«29» 01 Հավելված 1
2015թ.
N 2-17 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

“Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունների և շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորող մեխանիզմները” ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015թվականի պետական բյուջե

2. Աշխատանքի նպատակը

Կիրառելով այժմեական նուրբ էլեկտրոֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, ինտեգրատիվ և այլ մեթոդներ, շարունակել ուսումնասիրել նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական, շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում)

Պոստենցիալների ներքջջային արտաձման մեթոդով ուսումնասիրել անդաստակային կորիզային համակարգի նեյրոնների պատասխանները ուղեղիկի կեղևի գրգռման ժամանակ: Նախատեսվում է շարունակել հետազոտությունները անդաստակային փոխհատուցման (ԱՓ) պրոբլեմով միակողմանի լաբիրինթեկտոմիայի պայմաններում օձերի այլ թույների և նյարդակարգավորիչ-իմունակարգավորիչների կիրառումով: Էնդոգեն և կենդանական ծագման էկզոգեն բիոմոդուլյատորների նյարդապաշտպան ազդեցությունների պայմաններում նախատեսվում է ԿՆՀ պլաստիկության մորֆոֆունկցիոնալ կազմավորման և վերակազմավորման ուսումնասիրություններ՝ սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ ծայրամասային ու կենտրոնական ծագման սուր և քրոնիկ ՆԴ ժամանակ: Ալցհեյմերի տիպի դեմենցիաների ժամանակ նախատեսվում է ուսումնասիրել հրահրված սինապսային ակտիվությունը գլխուղեղի ախտահարված բաժիններում՝ հիպոկամպ, Մեյներտի կորիզ, նշահամալիր և կեղև, առնետների մոտ ձվարանների հեռացման պայմաններում: Նախատեսվում է շարունակել սինապսային հաղորդականության վրա ազդող գլխալ բջիջների փոփոխական դերն ուսումնասիրող նեյրոգլիալ փոխհարաբերությունների մոդելի մշակումը: Նախատեսվում է ժամանակակից մեթոդներով ուսումնասիրել ուղեղի բջջային կառույցների մորֆոֆունկցիոնալ վիճակը՝ 1. կալցիում ադենոզինետրոֆոսֆատային մեթոդ, որը

նախատեսված է միկրոշրջանառության հունի հայտնաբերման համար, 2. Ca^{2+} կախյալ թթու ֆոսֆատազի ակտիվության հայտնաբերման հիստոքիմիական մեթոդ 3. նախագծվում է անցկացնել զուգահեռ էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություններ: Էլեկտրոնային մանրադիտում:

Ներկայումս ցույց է տրված "Բիոսկոպ" համալիր սարքավորման կիրառման արդյունավետությունը կենդանիների օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակի վրա սթրեսային, հետտրավմատիկ և դեղորայքային ազդեցության, ինչպես նաև փորձարարական տրիխինելյոզի (*trichinella spiralis*) բնույթի գնահատման համար: Հետազոտման նպատակն է՝ բացահայտել էֆեկտիվ անոթապաշտպանիչ և հակահեմոռագիկ միջոցներ, որոնք թույլ կտան չեզոքացնել գյուրգայի թույնի մետոցինկինների ազդեցությունը կենդանիների օրգանիզմի վրա և վերլուծել այս երևույթների մեխանիզմները: Նախատեսվում է գնահատել տոքսինի և լիպիդային երկշերտ համալիրի առաջացմանը հաջորդող օպտիկական սպեկտրասկոպիկ և էլեկտրական հատկությունների փոփոխությունը և ուսումնասիրել ազդեցությունը լիպիդների գել/հեղուկ անցման էներգետիկ պատկերի վրա, որպես սպիտակուցային միացության առաջնային կառուցվածքի և ամինաթթվային հերթականության ածանցյալ: Պլանավորվում է ուսումնասիրել մինչ այժմ չուսումնասիրված միզոլիդների, ինչպես նաև արգանդի մարմնի և փողերի պեյսմեկերային ակտիվությունների էլեկտրաֆիզիոլոգիական հատկանիշների բնույթը և կատարել բոլոր տիպի ինքնաբուխ ակտիվությունների համեմատական վերլուծություն: Ուսումնասիրել հետնամիջային ենթատեսաթմբի ազդեցությունը շնչառական նեյրոնների իմպուլսային ակտիվության, ինչպես նաև "վազուսային" ընդերազգաց նեյրոնների և փորձարարական նյարդածին զարկերակային հիպերտենզիայի զարգացման վրա: Նոր մշակված համակարգչային-մոդիֆիկացված ուղղող թեստերի միջոցով կշարունակվեն հետազոտությունները ուշադրության պրոցեսի դինամիկ առանձնահատկությունների և մտավոր աշխատունակության բացահայտման ուղղությամբ, որոնք համարվում են գլխուղեղի ֆունկցիոնալ վիճակի ինտեգրատիվ բնութագրեր:

Ինունյոթիական մեխանիզմների հետազոտություններ հյուսվածքային ինժեներիայի ոլորտում:

4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ.Ա.Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի Ինստիտուտի հետազոտությունների հիմնական ուղղությունը “Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկ հատկությունների և շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորող մեխանիզմների” ուսումնասիրությունն է: Նշված խնդիրը ներառում է երկու բաժիններ. “Շարժումների կենտրոնական կազմակերպման ինտեգրատիվ ու պլաստիկական մեխանիզմները” և “Վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման կենտրոնական և ծայրամասային մեխանիզմները”:

Հեռանկարային և արդիական է ցածրակարգ ողնաշարավորների շարժումների ղեկավարման հետ կապված համեմատական ֆիզիոլոգիական հետազոտությունների իրականացումը: Անպոչ երկկենցաղների ընտրությունը, որպես հետազոտության օբյեկտ, արդարացված է նրանով, որ գտնվելով ողնաշարավորների էվոյուցիոն զարգացման վաղ էտապում, նրանք ունեն ամենաքիչ տարբերակված անդաստակ-ողնուղեղային և ուղեղիկային գոյացություններ, որոնք հանդիսանում են օրգանիզմի շարժողական ֆունկցիաների հսկման վերողնուղեղային հնագույն համակարգերից մեկը: Հայտնի է, որ միջին ուղեղի սև նյութի՝ նեյրոմելանինի մեծ քանակի կուտակմամբ պայմանավորված դոպամինային նեյրոնների մահը հանդիսանում է Պարկինսոնի հիվանդության առաջացման պատճառը: Ներկայումս սև նյութի վերաբերյալ համակարգված ուսումնասիրություններ չկան:

Վեստիբուլային կոմպենսացիայի (ՎԿ) խնդիրը միակողմանի լաբիրինթեկտոմիայի ժամանակ (ՄԼ) անմիջականորեն կապված է ուղեղի լատերալիզացիայի և ասիմետրիայի հետ, որի խոր ուսումնասիրությունը ժամանակակից մեթոդներով հանդիսանում է խիստ արդիական և թերի ուսումնասիրված: Այս մոդելի յուրահատկությունը կայանում է նրանում, որ լաբիրինթեկտոմիան վեստիբուլային կորիզներում առաջացնում է մեծածավալ դեաֆերենտացիա, իսկ համակարգի կենտրոնական օղակներում և ուղեղի այլ կենտրոններում տեղի ունեցող պլաստիկ բնական և ներմուծվող (տարբեր թույլներ, նյարդամոդուլյատորներ) գործոնների շնորհիվ ապահովվում է պլաստիկ վերակազմավորումը և ՎԿ:

Հորմոնալ հիպոֆունկցիայի հետևանքով առաջացած նյարդադեգեներատիվ (ՆԴ) պաթոլոգիաների էլեկտրաֆիզիոլոգիական չափանիշերի և դրանց օպտիմալ կարգավորման ուղիների բացահայտումը համարվում է կարևոր բժշկա-կենսաբանական

խնդիր: Չվարանների և մակերիկամների հեռացման հետևանքով առաջացած հորմոնային հոմեոստազի խանգարումներն արտահայտվում են նյարդաբջջի վերականգնման, սինապսային փոխանցման և պլաստիկության գործառույթներում:

Սթրեսը հանդիսանում է մեծ սոցիալական պրոբլեմ, քանի որ առօրյա կյանքը լի է սթրեսային ռեակցիա առաջացնող զանազան գործոններով: Մի շարք համակարգերի ֆիզիոլոգիական գործունեության ակտիվացման հետևանքով մի կողմից օրգանիզմը արագ մոբիլիզացվում է, որպեսզի հակազդի հոմեոստազի խանգարմանը, մյուս կողմից՝ սթրեսային ռեակցիայի քրոնիկ ակտիվացումը կործանարար է ազդում օրգանիզմի հոմեոստազի վրա: Ներկայումս ոչ պակաս արդիական է ալկոհոլային էնցեֆալոպատիան, որը հանդիսանում է դեմենցիայի հիմնական պատճառներից մեկը և հիվանդների մոտ ախտորոշվում է 10-30% տկարամտություն՝ կլինիկական նշաններով: Ալկոհոլիզմի հետևանքով առաջացած սոցիալական վնասը հասնում է մեծ մասշտաբների: Պրոբլեմը բարդացվում է նրանով, որ էնցեֆալոպատիայի գաղտնի նշանները դիտվում են ալկոհոլ չարաշահող մարդկանց մեծամասնության մոտ: Սթրեսի ժամանակ տեղի է ունենում մի շարք ֆիզիոլոգիական պրոցեսների փոփոխություն, որը հատկապես ազդում է առավել թթվածին-կախյալ հյուսվածքների, մասնավորապես՝ գլխուղեղի արյան շրջանառության վրա:

Նեյրոնային համակարգերին նմանակող մոդելների ստեղծումը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ հաշվի առնել նեյրոնի իրական հատկությունները: Նմանակող մոդելները, որոնք հաշվի են առնում նեյրոնի ընդհանուր հատկությունները և իրական պարամետրերը, ի մի են բերում ֆիզիոլոգիական փորձի տվյալները և հնարավորություն են տալիս այդ տվյալների համակողմանի վերլուծությանը և տեսական ընդհանրացմանը: Այդ մոդելների օգնությամբ կարող են ստեղծվել այնպիսի արհեստական պայմաններ և գործունեության ռեժիմներ, որոնք անմատչելի են փորձարարական հետազոտությունների ժամանակ, նաև կարող են ծրագրվել ապագա փորձարկումների տարբերակները:

Նախկինում կատարված աշխատանքները բերեցին "Բիոսկոպ" համալիր սարքավորման մշակմանը, որը թույլ է տալիս կատարել կենսաբանական համակարգերի ֆիզիոլոգիական վիճակի գնահատում: Ստացված տվյալները ցույց են տալիս կենսաբանական համակարգերի յուրահատուկ, հեռահար ազդեցության ունակությունը շրջակա միջավայրի օբյեկտների նկատմամբ: Ստացված արդյունքները խոսում են հետազոտությունների արդիականության մասին՝ ուղղված դիտվող երևույթների բնույթի բացահայտմանը և գործնականում դրանց կիրառման հնարավորության գնահատմանը:

“Անոթապաշտպանիչ և հակահեմոռագիկ միջոցների ազդեցությունն օրգանիզմի ֆիզիոլոգիական և տոքսիկոլոգիական ցուցանիշների վրա գյուրգայի թույնի որոշակի բաղադրիչներով ազդեցության ժամանակ” հետազոտությունն արդիական է այն բանով, որ մի կողմից, ընդհանուր առմամբ, անոթների թափանցելիության վնասվածքները եվ արյունահոսությունները հանդիսանում են գործնականորեն հիվանդությունների մեծամասնության զարգացման եվ ընթացքի ուղեկցող երևույթներ, իսկ մյուս կողմից՝ նշված ախտածին երևույթները զարգանում են իժերի խայթման ժամանակ:

Անկախ նրանից, որ Viperid-ների թույները կարող են պարունակել 100-ից ավել սպիտակուցային բաղադրիչներ, թույնի սպիտակուցները պատկանում են միայն մի քանի հիմնական սպիտակուցային ընտանիքների, ներառյալ էնզիմները (serine proteinases, Zn²⁺-metalloproteinases, L-oxidase ամինաթթու, II PLA₂ խումբը) և ցածրամոլեկուլային պրոտեազներ (disintegrins, C-type lectins, natriuretic պեպտիդներ, myotoxins, CRISP տոքսիններ, նյարդի և անոթային էնդոթելի աճի գործոններ, և cysteine ու Kunitz-տեսակի պրոտեազների ինհիբիտորներ): Սպիտակուցների կառուցվածքա-ֆունկցիոնալ փոփոխությունների հիմնական մեխանիզմների ուսումնասիրությունները էական տեսական հետաքրքրություն են ներկայացնում մոլեկուլային կենսաբանության զարգացման ոլորտում, նոր գիտահետազոտական միջոցների մշակման և պոտենցիալ կլինիկական կիրառման, դեղորայքի օգտագործման և հակաթույնի արտադրության ռազմավարության մշակման համար: Թունաբանական լաբորատորիայի հետազոտությունները այսօր արդիական են Հայաստանի համար: Թույնի հետազոտում՝ բաղադրիչների անալիզ, կառուցվածքի և ազդեցության ուղիների հետազոտում, ներառյալ կենսաքիմիական, դեղագործական և իմունաբանական ասպեկտները և մոլեկուլյար կենսաբանությունը, նյարդային համակարգի ընկալիչների ուսումնասիրում, թույնի բաղադրիչների նույնացում, որոնց որոշ մասը կարող է թերապևտիկ նշանակություն ունենալ:

Հայտնի է, որ հարթ մկանների հիմնական ֆունկցիան պերիստալտիկ գործունեության ապահովումն է: Նման ակտիվությունը տատանվում է և այն կախված է ինքնաբուխ էլեկտրական ակտիվության ծագման վայրից: Վերին միզուղիների և արգանդի տարբեր մասերի հաչթ մկաններում հայտնաբերվել են մասնագիտացված, բարձր ակտիվությամբ հատվածներ, որոնք կատարում են ռիթմավարի դեր: Այսպես, միզածորանի պիելոուրեթերալ հատվածը նպաստում է սպայկային ակտիվության տարածմանը մինչև միզապարկ: Դրա հետ մեկտեղ օրգանի հարմիրապարկային շրջանի

համար այն կատարում է պահեստային մեխանիզմի դեր՝ մեզը դեպի միզապարկ մղելու համար: Ի տարբերություն արգանդի վզիկի, օրգանի վերին երկու հատվածներում ներկայացված է ինքնավար (ավտոնոմ) ռիթմաձևություն սպայկային ակտիվության տեսքով: Ռիթմաձին գոյացությունների մորֆոֆուլկցիոնալ հատկանիշների տվյալները, ինչպես առանձին բջիջների, այնպես էլ ամբողջ հատվածի համար նպատակային է բացահայտել այն մեխանիզմները, որոնք կոորդինացնում են օրգանի տարբեր հատվածների էլեկտրական ակտիվությունը կծկողական գործունեության իրականացման համար:

Մարդու գլխուղեղի ֆունկցիոնալ վիճակի (ՖՎ) ուսումնասիրությունը առավել հրատապ է դառնում պայմանավորված շարունակաբար աճող տարբեր սթրեսաձին գործոնների ազդեցությամբ: ՖՎ-ի գնահատման առկա մեթոդներն օժտված չեն բարձր զգայունությամբ և կարող են հայտնաբերել ՖՎ-ի միայն լավ արտահայտված փոփոխությունները: Անհրաժեշտություն է առաջացել ստեղծել մարդու գլխուղեղի ՖՎ համակարգչային ախտորոշման ավելի զգայուն և հուսալի մեթոդներ, որոնք հնարավորություն կտան բացահայտել նոր ֆիզիոլոգիական չափորոշիչներ և ինֆորմատիվ ցուցանիշներ:

Լաբորատորիայում մշակված համակարգչի համար ձևավորված ուղղիչ թեստի միջոցով իրականացվող հետազոտություններն ուղղված են ուշադրության գործընթացի և մտավոր աշխատունակության դինամիկ առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Հայտնաբերվել են հետազոտվող գործընթացների դինամիկ բնութագրերի որոշակի տարբերություններ ուղղիչ թեստի երեք, աստիճանաբար բարդացող տարբերակների ընթացքում: Տարբեր աստիճանի բարդության թեստերի կատարման ընթացքում որոշված ուշադրության կենտրոնացման մակարդակի և մտավոր աշխատունակության արդյունավետության ցուցանիշների հարաբերակցությունը մեզ հնարավորություն է տալիս դատել գլխուղեղի ֆունկցիոնալ վիճակի մասին:

Ստացված արդյունքների հավաստիությունը բարձրացնելու նպատակով նման հետազոտությունները կշարունակվեն ավելի մեծ թվով փորձարկվողների մոտ, որը հնարավորություն կտա վեր հանել ուսումնասիրվող պարամետրերի (հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական և վեգետատիվ) նշանակալի տարբերություններ: Հաշվի են առնվել հետազոտվողների տարիքը, սեռը և անհատական-տիպային առանձնահատկությունները:


Հետազոտության արդյունքները կարող են կարևոր նշանակություն ունենալ ԿՆՀ կենսաադիթմերի ծագման մի շարք հիմնարար դրույթների հասկացման գործում, ինչպես

նան հետաքրքրություն կներկայացնեն բժշկության, աշխատանքի և սպորտի ֆիզիոլոգիայի մասնագիտական կողմնորոշման ասպարեզներում:

Օրգանիզմի շնչառական, սիրտանոթային և անոթաշարժ ֆունկցիաների կարգավորման կենտրոնական մեխանիզմների ուսումնասիրությունը խիստ արդիական է, քանի որ այն ոչ միայն տեսական նյարդաֆիզիոլոգիական պրոբլեմ է, այլ նաև հիմք է կենսական կարևոր համակարգերի գործունեության օրինաչափությունների բացահայտման համար՝ ինչպես նորմայում, այնպես էլ տարբեր արտակարգ իրավիճակներում և ախտաբանական պայմաններում: Այդ պրոցեսներում հատուկ դեր է կատարում ենթատեսաթումբը, որը կենտրոնական նյարդային համակարգի տարբեր մակարդակների հետ սերտորեն կապված կորիզային գոյացությունների համալիրից բաղկացած ենթակեղևային բարդ կառույց է:

5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը
տարեկան հաշվետվություն

Տնօրեն՝




(ստորագրություն)

(Ն.Ս.Այվազյան)

(անուն ազգանուն)



Ծրագրի գիտական ղեկավար



(ստորագրություն)

(Ն.Ս.Այվազյան)

(անուն ազգանուն)

Հավելված 2
 «29» 01 2015թ.
 N 2-17 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ



«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունների և շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորող մեխանիզմները» ծրագրի
 (ծրագրի անվանումը)

NN Ը/Կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	“Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունների և շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորող մեխանիզմները”	1.Բացահայտել օրգանիզմի շարժողական ֆունկցիաների կենտրոնական կազմակերպման ինտեգրատիվ պլաստիկական մեխանիզմները 2.Բացահայտել օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիաների կարգավորման կենտրոնական ծայրամասային մեխանիզմները	1.Փորձերի կատարում առնետների և մկների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-Ֆիզիոլոգիական, ու հյուսվածքաքիմիական, մաթեմատիկական և այլընտրանքային / Բիոսկոպ / մեթոդները 2. Փորձերի կատարում առնետների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրա-Ֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական և այլ մեթոդներ:	Արդյունքների հրապարակում գրաքննվող տեղական և միջազգային հանդեսներում	31.12.2015	123724,9 /մեկ հարյուր քսաներեք մլն յոթ հարյուր քսանչորս հազար ինը հարյուր / ՀՀ դրամ

Ընդամենը

ՀՀ գիտությունների ազգային
 ակադեմիա
 ք. Երևան, Մարշալ
 Բաղրամյան 24
 Հ/հ 1510005175820100
 ՀՎՀՀ 00005673
 Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

ՀՀ ԳԱԱ ակադ.Լ.Ա.Օրբելու անվ.
 Ֆիզիոլոգիայի ինստիտուտ
 Երևան, 0028, Օրբելի եղբ. փող.22
 ՀՎՀՀ 00008543
 Հ/Հ 163038100521 Մյասնիկյան
 «Հայէկոնոմբանկ»
 Տնօրեն՝ Ն.Ս.Այվազյան

Գ. Տ. 
 (ստորագրություն)
 ՌԱԴԻԿ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ
 Ծրագրի գիտական ղեկավար

 (ստորագրություն)

Գ. Տ. 
 (ստորագրություն)
 Նաիրա Մ.Այվազյան

 (անուն ազգանուն)

Հավելված 3
«29» 01 2015թ.
N 2-17 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնության
"Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունների և
շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորող
մեխանիզմները" ծրագիր
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և
ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի ինստիտուտի ի դեմս տնօրեն

(կազմակերպության անվանումը)

Նաիրա Մարտինի Այվազյանի, վկայում ենք, որ համաձայնություն են
(անուն ազգանուն)

ձեռք բերել

«29» 01 2015թ. N 2-17 պայմանագրով աշխատանքի արժեքի

վերաբերյալ՝ 123724,9 /մեկ հարյուր քսաներեք մլն յոթ հարյուր քսանչորս հազար ինը
հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և
վճարումների համար:

ՀՀ զիտությունների ազգային ակադեմիա
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24
Հ/հ 1510005175820100

ՀՎՀՀ 00005673

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվ.
Ֆիզիոլոգիայի ինստիտուտ
Երևան, 0028, Օրբելի եղբ. փող. 22
ՀՎՀՀ 00008543

Հ/Հ 163038100521 Սյանիկյան

«Հայէկոնոմբանկ»

Տնօրեն՝ Ն. Այվազյան

(ստորագրություն)

Գ. Տ.

Կ. Տ.

Օրագրի գիտական ղեկավար
Նաիրա Մարտինի Այվազյան



(ստորագրություն)



Նաիրա Մ. Այվազյան /

(անուն ազգանուն)

Հավելված 4
 «29» 01 2015թ.
 N 2-17 պայմանագրի

Գիտական ծրագրի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	87687,6	17537,5	21921,9	21921,9	26306,3
2	տնտեսական և այլ ծախսեր	36037,3	7207,5	9009,3	9009,3	10811,2
3	Ընդամենը	123724,9	24745,0	30931,2	30931,2	37117,5

Տնօրեն՝ [Signature]
 (ստորագրություն)

(Նաիրա Մ.Այվազյան)
 (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ [Signature]
 (ստորագրություն)

(Կարինե Հակոբյան)
 (անուն ազգանուն)



Ծրագրի գիտական ղեկավար՝ [Signature]
 (ստորագրություն)

(Նաիրա Մ.Այվազյան)
 (անուն ազգանուն)